https://doi.org/10.46991/hc.2022.18.2.135

Issues of Exhibiting the Armenian Traditional Dwelling in the Memorial Complex of Sardarapat's Battle, National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle

Karine Yeritsyan
https://orcid.org/0000-0002-0289-6299
Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, Researcher Department of Tangible Culture
karine.yeritsyan6@gmail.com

Keywords: traditional dwelling, glkhatun (skylight dwelling), underground and semi-literate houses, Museum of Armenian Ethnography, exhibition, open-air museum.

Issues of exhibiting the armenian traditional dwelling in the museum of Armenian ethnography. The article focuses on peculiarities of the dwellings of the ethnic group that has lived in the Armenian Highland. Special attention is drawn to the conditions of construction of traditional folk dwellings. The peculiarities of the skylight dwellings construction and the prevalence of its two variations in the historical and ethnographic regions of Armenia are also noteworthy. Glkhatun was the main type of dwelling in the second half of the 19th -early 20th centuries.

The article also discusses the impact of the Soviet period on the traditions of house building and the main changes as a result of this impact. The role of museums in the preservation of cultural values is emphasized. The relevance and significance of exhibiting traditional houses in museums are also studied. Variants for displaying dwellings are being considered.

The article touches upon the issue of organizing an exhibition of a traditional dwelling in the Museum of Armenian Ethnography.

Հայկական ժողովրդական բնակարանի ցուցադրման հիմնախնդիրները Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում

Կարինե Երիցյան
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, «Նյութական մշակույթ» բաժնի գիտաշխատող

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 135-149

Received: 28.09.2022
Revised: 08.11.2022
Accepted: 25.12.2022

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2022

Issues of Exhibiting the Armenian Traditional Dwelling in the Memorial Complex of Sardarapat's Battle, National Museum of Armenian Ethnography and History of the Liberation Struggle

Հայկական ժողովրդական բնակարանի ցուցադրման հիմնախնդիրները Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում

Հիմնաբառեր – Հայոց ազգագրության թանգարան, բացօթյա թանգարան, ժողովրդական բնակարան, գլխատուն, գետնափոր և կիսագետնափոր տներ, ցուցադրություն:

Հոդվածում խոսվում է Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող բնակարանային տիպերի առանձնահատկությունների մասին: Ուշադրություն է դարձվում ավանդական ժողովրդական բնակարանների կառուցման նախադրյալներին, ինչպես նաև XIX դարի երկրորդ կեսի ու XX դարի սկզբի բնակարանային հիմնական ձևի՝ գլխատան, կառուցման առանձնահատկություններին և նրա երկու տիպերի տարածվածությանը պատմազգագրական մարզերում:

Խոսվում է նաև բնակարանաշինության ավանդույթների վրա խորհրդային կարգերի հաստատման ազդեցության և այդ ազդեցությամբ կրած հիմնական փոփոխությունների մասին:

Կարևորվում է նաև մշակութային արժեքների պահպանության գործում թանգարանների դերը: Քննվում են ժողովրդական տների ցուցադրության արդիականությունն ու կարևորությունը թանգարաններում:

Դիտարկվում են բնակարանների ցուցադրման տարբերակներ: Անդրադարձ է կատարվում Հայոց ազգագրության թանգարանում ավանդական տան ցուցադրության կազմակերպման հիմնախնդրին:

Вопросы экспозиции армянского традиционного жилища в мемориальном комплексе сардарапатской битвы, Национальный музей этнографии армян и истории освободительной борьбы

Карине Ерицян

Мемориальный комплекс сардарапатской битвы, национальный музей этнографии армян и истории освободительной борьбы, научный сотрудник отдела Материальная культура

Ключевые слова: традиционное жилище, глхатун (жилище с центральным отверстием в потолке), подземные и полуподземные дома, Музей этнографии армян, экспозиция, музей под открытым небом.

Вопросы экспозиции армянского традиционного жилища в музее этнографии Армян. В статье обсуждаются особенности жилого дома этноса, проживавшего в Армянском нагорье. Особое внимание уделяется условиям строительства традиционных народных жилищ. Также обращено

внимание на особенности строительства и распространенность двух типов народного жилища в историко-этнографических регионах Армении второй половины XIX -начала XX вв.

Обсуждаются также влияния на традиции жилищного строительства в советский период и основные изменения в результате этого воздействия. Подчеркивается также роль музеев в сохранении культурных ценностей, актуальность и важность показа народных домов в музеях.

Рассматриваются варианты экспозиции традиционного жилища. Затрагивается проблема организации выставки традиционного жилища в Музее этнографии армян.

* * *

Պատմության զարգացման ընթացքում Հայկական լեռնաշխարհում բնակվող հայ ժողովրդի ներկայացուցիչները բնակվել են ժայռախորշերում, քարայրերում, գետնափոր և կիսագետնափոր տներում, այնուհետև՝ աստիճանաբար գետնի վրա կառուցված տներում, որոնք պահպանել են քարանձավային ու գետնափոր տների ներքին մասերը, ձևերն ու հարմարությունները: Սկզբնական շրջանում այդ տները կառուցված են եղել մեկ սրահով, և աստիճանաբար ավելացել են հարակից սենյակները, որոնք կրել են տնտեսական ու արտադրական բնույթ, կազմել են մեկ ամբողջական համալիր (Վարդանյան, 1959, 35):

Ժողովրդական բնակելի տուն կառուցելու համար անհրաժեշտ են մի քանի նախադրյալներ, որոնցից կարելի է տարբերակել փոփոխական ու հաստատուն նախադրյալները: Փոփոխական են հասարակության զարգացմանը զուգահեռ կատարվող փոփոխությունները, մասնավորապես բնակարանի կազմը, մշակույթի ու տեխնիկայի զարգացման մակարդակը, հորինվածքային տարրերը և այլն: Հաստատուն նախապայմաններ են կլիմայական պայմանները, տեղական շինանյութերը և այլն, որոնք էապես չեն փոփոխվում ժամանակի ընթացքում (Մնացականյան, 1956, 88):

Հայաստանում ավելի հաստատուն ու մնայուն բնակարաններ են եղել գետնափոր ու կիսագետնափոր տները (Վարդանյան, 1959, 28): Գետնափոր տների մասին պատկերացում կարելի է կազմել ըստ հայտնի հույն պատմիչ ու զորավար Քսենոփոնի «Անաբասիս» գրքում առկա տվյալների. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասը՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր հողի մեջ, մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը» (Քսենոփոն, 1970, 97):

Թեև ազգագրական տվյալները վկայում են վերը նշված տիպի բնակարանների գոյությունը պատմաազգագրական մարզերում մինչև XX դարը, այնուամենայնիվ դարերի ընթացքում դրանք կրել են փոփոխություններ և դուրս եկել «փոսերից»՝ պահպանելով հնագույն բնակարանների յուրօրինակությունը (Մաթևոսյան, 1985, 30):

Հետագայում Հայաստանի գյուղերն այցելած եվրոպացի, ռուս ու հայ ճանապարհորդներ Ֆ. Դյուբուան (DuBois de Montperreux, 1893, 324), Շ. Տեքսիեն (Texier, 1842, 214), Բ. Շանտրը (Chantre, 1893, 368), Ա. Գրիբոյեդովը (Գրիբոյեդով, 1945, 94), Ա. Պուշկինը (Пушкин, 1949, 437), Լ. Սարգսյանը (Սարգսյան, 1890, 19) և այլք տվել են բնակարանների նկարագրերը (Սամուելյան, 1941, 196): Թեև նրանց աշխատությունները նվիրված չեն եղել ժողովրդական բնակարանների կառուցվածքին, այդուհանդերձ կարելի է որոշակի պատկերացում կազմել այդ մասին:

Ինչպես նշում է Վ. Բդոյանը, տների զարգացման պատմությունը ցույց է տվել, որ Հայաստանին բնորոշ են եղել մեկ, երկու և մի քանի բաժիններով տան համալիրները: Բազմաբաժին տան համալիրներում եղել են թոնրատունը, խոհանոցը, մառանը, ննջարանները,

գոմը, գոմին կից սենյակը՝ օդանը, և այլն (Բդոյան, 1974, 68): Այս բոլոր ենթամասերը հիմնականում առաջացել են ըստ ընտանիքի կենցաղային պահանջների, ունեցել են իրենց օգտակար դերակատարությունը, չի եղել ոչ մի ավելորդ բաժին:

Բնակարանային տիպերի ձևավորման վրա հիմնականում ազդել են բնակչության տեղաշարժերն ու փոխազդեցությունը էթնիկական հանրույթների միջև: XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին գլխատունը[1] հիմնական ձևն էր իր երկու տիպերով (Марутян, 1989, 71), (Նկ. 1):

Առաջին տիպը տարածվում էր Հայաստանի նախալեռնային, անտառաշատ շրջաններում՝ Լոռիում, Տավուշում, Արցախում, Սյունիքում, Վանա լճի արևելյան և հարավային ափամերձ շրջաններում, Մշո դաշտում: Այն բաղկացած էր հիմնականում հետևյալ բաժիններից՝ սրահ (երեսբաց, էյվան), գլխատուն (կենալատուն, դարադամ), մառան, գոմ, երբեմն նաև քաղաքատիպ հյուրասենյակ (օթախ): Այս տիպին բնորոշ էր բնակելի և տնտեսաարտադրական շինությունների առանձնացվածությունը (Նահապետյան, 2021, 149-171):

Երկրորդ տիպն ընդգրկում էր ջերմաստիճանի կտրուկ տատանումներ ունեցող ցրտաշունչ, սարահարթային ու գրեթե անտառազուրկ շրջաններն Արևելյան Հայաստանում՝ Շիրակում, Արագածոտնում, Գեղարքունիքում, Ջավախքում, Արևմտյան Հայաստանում՝ Բարձր Հայքում: Այն ներառում էր բակը (շվաք), գլխատունը (տան տուն, տուն), մառանը (քոխ, քիլար), գոմը

[1] Գլխատուն – հազարաշեն, բոլորատուն, հացատուն, թոնրատուն, գմբեթաձև ծածկով երդիկավոր տուն: Անցյալում եղել է Հայաստանի լեռնային ու նախալեռնային գավառների բնակարանի հիմնական տիպը, օժանդակ կառուցվածքների առկայության դեպքում՝ համակառույցի գերիշխող ծավալը: Ունեցել է ցերեկային կացարանի, ննջարանի, խոհանոցի, ճաշասենյակի, երբեմն նաև տնտեսական ու արտադրական նշանակություն: Գլխատունն ունեցել է մարդկանց աշխատանքում և կենցաղում օգտագործվող բազմազան իրեր, կահույք ու կրակարան (օջախ): Իրրև պահարան ծառայող որմնախորշերից բացի՝ ունեցել է առագաստի խորշ կամ խոհանոցի դեր կատարող մեծ խորշաձև բաժանմունք: Վերջինս փոքր-ինչ բարձրացված հատակում ունեցել է առանձին թոնիր ու գմբեթաձև, երդիկավոր ծածկ, իսկ երբեմն նաև կամարավոր մուտք…: Պատմաազգագրական տարբեր շրջաններում գործածված անուններից տարածված են եղել ուղղանկյուն տարբերակի ԽԱՉՔ բազմանիստի ՀԱԶԱՐԱՇԵՆ, ՍՈՂՈՄԱՔԱՇ, Արցախում ՊԻԼՈՐԱՏՈՆ անունները: Այդ տիպերն ունեցել են կառուցվածքի բազմապիսի տարբերակներ…: Ավելի սակավ հանդիպող քարե, աղյուսե, բետոնե կամ նրանց խառնուրդով ստեղծված ծածկերին պատերի վրա բարձրացել են սահուն անցումներով: Գլխատան ամենապարզ շինությունը կազմված է եղել միայն կացարանից: Հաճախ անասուններին նույնպես տեղավորել են գլխատանը՝ այնտեղ ցանկապատված մի անկյունում: Գլխատան չափերը պայմանավորված էին այնտեղ հաստատվողների քանակից ու ունևորության աստիճանից: Անցյալում գլխատներում էին կատարվում հարսանիքները: Գլխատունը տարածված երևույթ էր ընդհուպ XX դարի առաջին տասնամյակները…: (Կարախանյան, 2003, 120): Արցախում, Սյունիքում այն անվանել են «դարադամ», որը թուրքերեն է և թարգմանաբար նշանակում է «սև տուն» (Лисициан, 1925, 99; Վարդանյան, 1959, 44):
Գլխատան հնագույն օրինակները Հայկական լեռնաշխարհում երևան են եկել բրոնզի դարաշրջանում: Ճարտարապետական առումով ամենաուշագրավը Գլխատան ծածկն է: Տարածված ու բազմազան է եղել հատկապես փայտե կառուցվածքը: Այն գերանակազմ է, դեպի վեր աստիճանաբար նվազող կողմով քառանկյունիներից կամ բազմանկյունիներից, որոնց անկյունագծերը ընդհանուր առանցքների նկատմամբ մեկընդմեջ փոխում են իրենց դիրքը… (Գասարջյան, 2007, 62):

(թալվա), գոմին կից սենյակը (գոմի օդա), վերջինս երբեմն քաղաքային տիպի էր։ Այս համալիրի կարևորագույն և տարբերակիչ հատկանիշն էր բնակելի ու տնտեսական շինությունների ընդգրկումը մեկ ծածկի տակ (Նահապետյան, 2021, 149-171)։

Նկատելի է, որ գլխատան հորինվածքով համալիրները տարածված են ամբողջ Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում՝ սկսած Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան (Ильина, 1964, 17)։

Խորհրդային կարգերի հաստատումից շատ առաջ արդեն սկսվել էր գլխատների վերացման գործընթացը (Մնացականյան, 1956, 88), ինչը կարելի է դիտարկել նաև իբրև կենցաղի բարելավման արդյունք։ Այս իրողությունը Հայաստանում, ինչպես նաև խորհրդային բոլոր երկրներում, նպաստեց քաղաքային ու գյուղական բնակարանների շինարարության լայն թափով սկզբնավորմանը։ Ներկայումս բնակարանաշինության վրա մեծ է եվրոպական ազդեցությունը։ Այս ամենը կապված է նաև սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմամբ։ Մեծ մասամբ գրեթե չեն պահպանվել ժողովրդական բնակարանների ճարտարապետությունն ու ժողովրդական ճարտարապետության ավանդույթները։ Այդ իսկ պատճառով խնդիր է առաջանում ավանդական բնակարանների մասին պատկերացում կազմելու և անհրաժեշտ գիտելիքներ ունենալու, նաև դրանք ժառանգելու սերունդներին։ Որպես խնդրի լուծման տարբերակներ կարելի է դիտարկել ժողովրդական տների չափագրումը, լուսանկարումն ու դրանց օգնությամբ ազգագրության բացօթյա թանգարանների ստեղծումը, ինչպես նաև արդեն գործող թանգարաններում մշտական կամ ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումը։ Այս միտումը հնարավորություն կտա և՛ ազգագրագետներին, և՛ ճարտարապետներին ուսումնասիրելու, պահպանելու և հանրահռչակելու մշակութային արժեք համարվող ժողովրդական բնակարանները։

Մշակութային արժեքների պահպանման, ուսումնասիրության և քարոզչության գործում մեծ է թանգարանների դերը։ Մեր օրերում ևս արդիական է ժողովրդական տների ցուցադրության հարցը թանգարաններում, քանզի ներկայումս, առավել քան նախկինում, եվրոպական ազդեցության ներքո հիմնովին փոփոխվել են բնակարանների կառուցման մեթոդները և՛ ճարտարապետական, և՛ կահավորման տեսանկյունից։

Ցուցադրման լավագույն տարբերակներից է արդեն վերը նշված ազգագրական բացօթյա թանգարանի ստեղծումը, որը հնարավորություն կընձեռի լիովին ներկայացնելու ժողովրդի նյութական մշակույթը և ոչ միայն։

Պատմական անցյալի վերարտադրման ու էթնոսի կենսագործունեության պահպանման, ուսումնասիրման և հանրահռչակման ինքնատիպ միջոց դարձան հատուկ առանձնացված, վերակառուցված կամ նորովի ստեղծված այն համալիրները, որոնք առավել հայտնի են «բացօթյա թանգարաններ» ընդհանուր անվամբ (Գևորգյան, 2016, 201-209)։

Առաջին բացօթյա թանգարանը Շվեդիայիում ստեղծված Սկանսենն է, որը ստեղծվել է 1891 թ. Արթուր Հազելիուսի ջանքերով։ Լինելով բացօթյա թանգարաններից առաջինը՝ ենթադրվում էր, որ հաջորդ նմանատիպ թանգարանները պետք է լինեին Սկանսենի օրինակով։

XIX դարում բացօթյա թանգարան ստեղծվեց Նորվեգիայում՝ «Մայհյոուգենը», իսկ XX դարում նման թանգարաններն ավելի լայն տարածում ստացան։ Ներկայումս ազգագրության բացօթյա թանգարանները մեծ թիվ են կազմում ամբողջ աշխարհում, և դրանց թիվն անցնում է 200-ից։ Հայտնի են Ֆրանսիայում Մեծ Լանդերի էկոթանգարանը, Գերմանիայում՝ Հեսսենպարկը, Դանիայում՝ Կոպենհագենի բացօթյա թանգարանը, Նիդեռլանդներում՝ Զեյդերզեեն, Անդորրայում՝ Կասա Քրիստոն, Ռումինիայում՝ Բուխարեստի գյուղական թանգարանը,

Սերբիայում՝ Դրևենգրադը, Տանզանիայում՝ Մակումբուշո գյուղը, Ռուսաստանի Դաշնությունում՝ Սուզդալի գյուղական ճարտարապետության և գյուղական կենցաղի թանգարանը, Լիտվայում՝ Ռումշիշկեսի ազգային կենցաղի թանգարանը, Էստոնիայում՝ Ռոկկա-ալ-Մարեն, Ուկրաինայում՝ Պիրոգովո էթնոպարկը, Վրաստանում՝ Թբիլիսիի ազգագրության թանգարանը և այլն (Գևորգյան, 2016, 201-209):

Ժամանակակից թանգարանագետների կարծիքով ազգագրության բացօթյա թանգարանները դասվում են այն թանգարանների շարքին, որոնք ներկայացնում են շինությունների (հյուղակներ, խրճիթներ, տներ, տաճարներ, պալատական համալիրներ, մենաստաններ և այլն), որոշակի նշանակության կառույցների (կամուրջներ, ջրաղացներ, ձիթհաններ, հնձաններ, աշտարակներ, դիտակետեր, ջրամբարներ և այլն) ու բնակտարածքների կազմակերպման (գյուղական համալիրներ, անասնապահական կայանատեղիներ, ռազմական նշանակության կերտվածքներ, դամբարանային կառույցների տեսակներ և այլն) մի ընդհանուր խումբ և նախապես մշակված պլանի համաձայն՝ կա՛մ վերանորոգվել են, վերակառուցվել ու համապատասխանեցվել բացօթյա թանգարանին ներկայացվող պահանջներին, կա՛մ էլ հավաքվել են մեկ ընդհանուր բաց տարածքում, տեղավորվել որոշակի հաջորդականությամբ ու դարձել մշտական ցուցադրության օբյեկտ: Երբեմն դրանց անվանում են նաև «կենդանի պատմության» («living history») թանգարաններ (Magelssen, 2007, 207; Գևորգյան, 2016, 201-209):

Այս տիպի թանգարանների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվել են մի քանի միջազգային կազմակերպություններ՝ Եվրոպայի բացօթյա թանգարանների ասոցիացիան (Association of European Open-Air Museums՝ AEOM) (https://theaeom.org/) և Կենդանի պատմության, ագարակային և երկրագործական թանգարանների ասոցիացիան (The Association for Living History, Farm and Agricultural Museums, ALHFAM) (https://alhfam.org/):

Թեև ազգագրության բացօթյա թանգարանները ձևավորվել են պատմական, հնագիտական և այլ բնույթի բացօթյա թանգարաններից համեմատաբար ուշ, բայց հսկայական դեր ունեն ազգային մշակույթի ու կենցաղի կազմակերպման յուրահատկությունների, ավանդույթների, տոնածիսական համակարգի, տարազի, կերակրատեսակների պահպանման, ուսումնասիրման ու հանրահռչակման գործում (Գևորգյան, 2016, 201-209):

Դեռևս 1981 թ. մշակվել էր հատուկ ծրագիր, ըստ որի՝ Հայաստանի ազգագրության թանգարանի շենքից դեպի արևմուտք՝ 25 հա տարածքի վրա, առաջարկվում էր ստեղծել բացօթյա թանգարանային ցուցադրություն (Նկ. 2): Այստեղ հնարավորություն էր ընձեռվում ներկայացնելու Հայաստանի տարբեր պատմաազգագրական տարածաշրջանների ժողովրդական բնակարանային կառույցների տեսակները: Նախատեսվում էր ցուցադրել Արևելյան Հայաստանի պատմաազգագրական տասը տարածաշրջանները՝ Այրարատը, Շիրակը, Ջավախքը, Լոռին, Տավուշը, Սյունիքը, Արցախը, Վայոց ձորը, Գեղարքունիքը, Արագածոտնը: Յուրաքանչյուր շրջանից չափագրվել էին մի քանի ժողովրդական տների ու տնտեսական կառույցների օրինակներ (Նկ. 3-8): Ծրագրում ներառված չէին Արևմտյան Հայաստանի տները, որոնց տեղափոխումը գրեթե անհնար էր, սակայն անհրաժեշտ էր, քանի որ թանգարանի մշտական ցուցադրությունը անդրադառնում էր այդ շրջանների կենցաղին ու

մշակույթին ևս (Միքայելյան, 1988, 47)։ Բացօթյա ցուցադրությունը պետք է համալրեր թանգարանի ցուցասրահներում ներկայացված ցուցադրությունը։

Ժամանակագրորեն այն պետք է ընդգրկեր հայ ժողովրդի մշակույթը՝ սկսած նախնադարյան հասարակության շրջանից մինչև սովետական ժամանակաշրջան։ Սակայն հիմնականում բացօթյա ցուցադրության շեշտը դրվելու էր XIX դարի և XX դարասկզբի գյուղական կենցաղին ու ճարտարապետությանը (Միքայելյան, 1988, 45)։ Այստեղ էին տեղափոխվելու ժողովրդական տները, որոնք հարդարվելու էին տվյալ ժամանակաշրջանին բնորոշ կահույքով։ Այս ցուցադրությամբ այցելուին հնարավորություն էր տրվում տեսնելու ոչ միայն բնակարանային, այլև առևտրական ու տնտեսական համալիրները, վերջիններիս տարբերություններն ու ընդհանրությունները։ Նախատեսվում էր նաև բացօթյա ցուցադրությամբ կազմակերպել առևտրաարհեստավորական հրապարակ, որտեղ կներկայացվեին բրուտի, ոսկերիչ-արծաթագործի, զինագործի, պղնձագործի, ժողովրդական նվագարանների պատրաստման արհեստանոցներ, գորգագործի տուն և, իհարկե, խանութներ, որտեղ կվաճառվեր այս արհեստանոցների արտադրանքը։ Կառույցներից մեկը պետք է լիներ հյուրատուն ու սպասասրահ, որը կծառայեր որպես թեյարան ու նաև խաղասրահ, որտեղ կծանոթանային ավանդական խաղերի տեսակներին։ Հրապարակի արհեստավորական կառույցներից մեկում կգործեր սննդի կետ, որտեղ կպատրաստվեին ազգային խորտիկներ։ Այս հրապարակը պետք է դառնար ազգային տոնախմբությունների կազմակերպման հիանալի վայր (Միքայելյան, 1988, 45), (Նկ. 9)։

Ցուցադրությունը արժեքավոր էր լինելու, քանի որ այստեղ էին տեղափոխվելու կառույցների բնօրինակ տարբերակները։ Ներկայումս գրեթե չեն պահպանվել այս հուշարձանները և հիմնականում հիմնովին փոփոխության են ենթարկվել հենց սեփականատերերի կողմից, ինչն էլ ենթադրում է, որ այս ծրագրի իրագործումը մեր օրերում անիրատեսական է։

Ժողովրդական տան ցուցադրումը այժմ էլ արդիական է և անհրաժեշտ Հայոց ազգագրության թանգարանում։ Թանգարանի շենքը ինքնին նպաստում է ցուցադրության կազմակերպմանը, քանի որ կառուցված է ավանդական ճարտարապետությանը բնորոշ որոշակի առանձնահատկություններով, մասնավորապես խոսքը եռագմբեթ հազարաշեն տանիքի մասին է, որը շատ յուրատիպ կառույց է (Նկ. 10)։

Մեկ այլ տարբերակով հնարավոր է նաև չափագրված տարբերակների հիման վրա ստեղծել ժողովրդական տների մանրակերտային (մակետային) տարբերակներ։ Այն հնարավորություն կընձեռի ցուցադրելու՝ տարածք խնայելով։ Թեև մասշտաբով ավելի փոքր է, սակայն ցուցադրական նյութի առումով ավելի ընդգրկուն է և ծավալուն։

Արդիական մեթոդներից կարելի է դիտարկել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, որը կմեծացնի ցուցադրման հնարավորությունները՝ թույլ տալով ազատ ստեղծագործել մարդկային երևակայությանը։ Ներկայումս անհնար է պատկերացնել ժամանակակից թանգարաններն առանց այս ամենի։ Այդպես հնարավորություն կլինի ավելի տեսանելի, մատչելի և համակողմանի ներկայացնելու։ Նորագույն տեխնոլոգիաները աստիճանաբար են ներթափանցել թանգարաններ. սկզբում դրանք կրել են օժանդակող բնույթ, այնուհետև զարգանալով՝ կազմել են թանգարանային ցուցադրության լրացուցիչ աղբյուր թանգարանային առարկաների հետ համատեղ (Գևորգյան, 2014, էջ 97)։

Այս միտումներին հետևելով՝ հնարավոր է ավանդական բնակարանը ցուցադրել՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաներ՝ զգայուն պատկերացույցներով սեղաններ (touch-table), զգայուն էկրաններ (touch screen) և այլն, ինչպես նաև եռաչափ տարբերակ, որը թույլ կտա վերակազմել բնակարանների տիպերը տարբեր հարթություններից:

Ցուցադրության գիտական նախագծման ու իրականացման ժամանակ անհրաժեշտ է պահպանել ցուցադրության կազմակերպման գիտականության, առարկայնության ու մատչելիության սկզբունքները, աշխատանքի սիստեմատիկ, պատմաժամանակագրական, թեմատիկ, անսամբլային մեթոդները:

Հայաստանիորոշ թանգարաններում կազմակերպվել են ժողովրդական տան ներքնատեսքի ցուցադրական համալիրներ, բայց ճարտարապետական տեսանկյունից առանձնահատկությունները ցուցադրելը շատ բարդ է, իսկ երբեմն՝ անհնար: Դրանք հիմնականում մարզային երկրագիտական թանգարաններն են և ցուցադրության մի մաս են կազմում՝ ներկայացնելով տվյալ մարզի ժողովրդական տան տիպը: Այս մոտեցումը նաև ունի իր դրական կողմը, այն է՝ բնակարանային տիպի ներկայացումը հենց իր պատմական միջավայրում:

Ամփոփելով կարելի է հանգել այն եզրակացության, որ այժմ ևս արդիական է և շատ կարևոր ու առաջնային ժողովրդական տան համալիրի ցուցադրումը թանգարաններում, մասնավորապես Հայոց ազգագրության թանգարանում: Նպատակն է ներկայացնել բնակարանի ավանդական տիպերը, ցույց տալ այդ համալիրների բաղադրիչները՝ հնարավորություն տալով այցելուին հաղորդակցվելու բնակարանային համալիրի բնութագրերին ու ճանաչելու դրանք: Իրավամբ, ավելի շահեկան է ժողովրդական տունը ցուցադրել Հայաստանի ազգագրության թանգարանում, քանի որ ազգագրական թանգարաններում իր արտացոլումն են գտնում էթնոսի մշակույթի զարգացման փուլերը, ինչն էլ դրսևորվում է նյութական ու հոգևոր մշակույթին նվիրված ցուցադրությունների նախագծմամբ ու կազմակերպմամբ:



Նկ. 1. Մարտունի (Халпахчьян О., Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), Москва, Стройиздат, 1971, с. 63)



Նկ. 2. Ժողովրդական ճարտարապետության ու կենցաղի բացօթյա ցուցադրության հատակագծի նախագիծը (Միքայելյան Վ., Հայաստանի բացօթյա թանգարանը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1988, N 3-4, 44)



Նկ. 3. Շմավոնյան Վազգենի տունը Արտաշատի շրջանի Վերին Արտաշատ գյուղում: Չափագրողներ՝ Հ. Վ. Վարդանյան, Մ. Հ. Հովհաննիսյան (1984-1987 թթ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 4. Ջրաղաց Արթիկի շրջանի Փանիկ գյուղում: Չափագրող՝ Մ. Հ. Հովհաննիսյան, (1987 թ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 5. Վարդանյան Սարիբեկի տունը Ախալքալաքի Բոգդանովկայի շրջանի Գումբորդո գյուղում (1898 թ.): Չափագրողներ՝ Մ. Հ. Հովհաննիսյան, Լ. Ն. Վասիլյան, (1987 թ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 6. Թադևոսյան Զարխալամի տունը Մարտունու շրջանի Վարդաձոր գյուղում: Ձիրայան Լևոնի (Հայկ) տունը Մարտունու շրջան Վարդենիկ գյուղում: Չափագրողներ՝ Լ. Ն. Վասիլյան, Է. Ա. Ֆրանգուլյան (1987 թ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 7. Աղասյան Լուսիկի տունը Մեղրիի շրջանի Կարճվան գյուղում: Չափագրողներ՝ Ն. Մ. Ղայաթանջյան, Մ. Ն. Ասատրյան, Մ. Հ. Հովհաննիսյան (1987 թ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 8. Կոստանյան Սերյոժայի տունը Անիի շրջանի Ձիթհանքով գյուղում (1893 թ.)։ Չափագրողներ՝ Մ. Հ. Հովհաննիսյան (1987 թ.), (Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի գիտական արխիվից)



Նկ. 9. Ժողովրդական ճարտարապետության ու կենցաղի բացօթյա ցուցադրության հատակագծի նախագիծը (Միքայելյան Վ., Հայաստանի բացօթյա թանգարանը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1988, N 3-4, 45)

Նկ. 10. Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի հազարաշեն տանիքը (լուսանկարի հեղինակը հոդվածագիրն է)

Գրականության ցանկ

Բդոյան Վ. (1974), Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատ., 286 էջ:

Գասարջյան Ս. (2007), Ճարտարապետական և շինարարական տերմինների ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բացատրական բառարան, Երևան, 576 էջ:

Գրիբոյեդով Ա. (1945), Ճանապարհորդական նոթեր, հրատ. «Հայպետհրատ», Երևան, 94 էջ:

Գևորգյան Լ. (2016), Ազգագրության թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները, Գիտական աշխատություններ, XIX, Գյումրի, էջ 201-209:

Գևորգյան Լ. (2014), Թանգարանային ցուցադրությունների կազմակերպման հիմունքներ, Երևան, 120 էջ:

Կարախանյան Գ. (2003), Հայոց ժողովրդական մշակույթը, հանրագիտարան, հ. Ա, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 321:

Մաթևոսյան Ս. (1985), Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 144 էջ:

Միքայելյան Վ. (1988), Հայաստանի բացօթյա թանգարանը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», N 3-4, էջ 41-50:

Մնացականյան Ս. (1956), Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, հրատ. ՀՍՍՌ ԳԱ, 243 էջ:

Նահապետյան Ռ. (2021), Հայկական ժողովրդական ավանդական բնակարանային համալիրների որոշ առանձնահատկությունների շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», N 3, էջ 149-171:

Սամուելյան Խ. (1941), Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Երևան, «Արմֆան» հրատ., 342 էջ:

Սարգսյան Լ. (1890), Այց թուրքաց Հայաստան, Թիֆլիս, «Մ.Դ. Ռօտինեանց» հրատ., 286 էջ:

Վարդանյան Ս., (1959), Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, «Հայպետհրատ», 132 էջ:

Քսենոփոն (1970), Անաբասիս, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 281 էջ:

Лисициан С. (1925), К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), "Известия Кавказского историко-археологического института", Тифлис, т. IV, с. 99-100.

Марутян А. (1989), Интерьер армянского народного жилища (вторая половина XIX -начало XX века). Материалы к "Кавказскому историко-этнографическому атласу". -"Армянская этнография и фольклор", выпуск 17, Ереван, издат. АН ССР, 143 с.

Ильина М. (1964), Древнейшие типы жилищ Закавказья, Москва, издат. АА СССР, 42 с.

Пушкин А. (1949), Полное сборание сочинений, Москва, 437 с.

Chantre (1893), A travers i Armenie Russe, հրատ. Librairie Hachette Et Cie, 368 p..

Magelssen S. 2007, Living History Museums: Undoing History Through Performance, Scarecrow, p. 207.

Texier Ch. (1842), Description de l'Armenie la Pers et la Mesopotamie, Paris, t. II, hrat. Librairie Hachette Et Cie, 214.

Frédéric DuBois de Montperreux (1893), Voyage autour du Caucase, chez les Tscherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Paris, t. III, հրատ. Librairie de Gide, p. 324 .

References

Bdoyan V. (1974), Hay azgagrutʻyun. hamaṛot urvagits, Erewan, EPH hrat., 286 ēj: **(in Armenian)**

Chantre (1893), A travers i Armenie Russe, hrat. Librairie Hachette Et Cie, 368 p. **(in Franch)**

Frédéric DuBois de Montperreux (1893), Voyage autour du Caucase, chez les Tscherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Paris, t. III, hrat. Librairie de Gide, p. 324 . **(in Franch)**

Gasarjyan S. (2007), CHartarapetakan ew shinararakan terminneri ṛus-hayeren ew hay-ṛuseren batsʻatrakan baṛaran, Erewan, 576 ēj: **(in Armenian)**

Geworgyan L. (2014), Tʻangaranayin tsʻutsʻadrutʻyunneri kazmakerpman himunkʻner, Erewan, 120 ēj: **(in Armenian)**

Geworgyan L. (2016), Azgagrutʻyan tʻangaranneri dzewavorman sotsʻial-tntesakan patchaṛnerĕ, Gitakan ashkhatutʻyunner, XIX, Gyumri, ēj 201-209: **(in Armenian)**

Griboyedov A. (1945), Chanaparhordakan notʻer, hrat. «Haypethrat», Erewan, 94 ēj: **(in Armenian)**

Il'ina M. (1964), Dpjevnjejshije tipy zhilish' Zakavkaz'ja, Moskva, izdat. AA SSSP, 42 s. **(in Armenian)**

Kʻsenopʻon (1970), Anabasis, Erewan, HSSH GA hrat., 281 ēj: **(in Armenian)**

Karakhanyan G. (2003), Hayotsʻ zh'oghovrdakan mshakuytʻĕ, hanragitaran, h. A, Erewan, «Gitutʻyun» hrat., ēj 321: **(in Armenian)**

Lisician S. (1925), K izuchjeniju apmjanskix kpjest'janskix zhilish' (Kapabaxskij kapadam), "Izvjestija Kavkazskogo istopiko-apxjeologichjeskogo instituta", Tiflis, t. IV, s. 99-100. **(in Armenian)**

Magelssen S. (2007), Living History Museums: Undoing History Through Performance, Scarecrow, p. 207.

Matʻewosyan S. (1985), Gyumrii zh'oghovrdakan chartarapetutʻyunĕ, Erewan, «Sovetakan grogh» hrat., 144 ēj: **(in Armenian)**

Maputjan A. (1989), Intjep'jep apmjanskogo napodnogo zhilish'a (vtopaja polovina XIX -nachalo XX vjeka). Matjepialy k "Kavkazskomu istopiko-etnogpafichjeskomu atlasu". -"Apmjanskaja etnogpafija i fol'klop", vypusk 17, JEpjevan, izdat. AN SSP, 143 s. **(in Russian)**

Mikʻayelyan V. (1988), Hayastani batsʻōtʻya tʻangaranĕ, «Kultur-lusavorakan ashkhatankʻ», N 3-4, ēj 41-50: **(in Armenian)**

Mnatsʻakanyan S. (1956), Hayastani gyughakan bnakavayreri chartarapetutʻyunĕ, Erewan, hrat. HSSṚ GA, 243 ēj: **(in Armenian)**

Nahapetyan Ṛ. (2021), Haykakan zh'oghovrdakan avandakan bnakaranayin hamalirneri orosh aṛandznahatkutʻyunneri shurj, «Patmabanasirakan handes», N 3, ēj 149-171: **(in Armenian)**

Pushkin A. (1949), Polnoje sbopanije sochinjenij, Moskva, 437 s.. **(in Russian)**

Samuelyan Kh. (1941), Hin Hayastani kulturan, h. II, Erewan, «Armfan» hrat., 342 ēj: **(in Armenian)**

Sargsyan L. (1890), Aytsʻ tʻurkʻatsʻ Hayastan, Tʻiflis, «M.D. Ṛōtineantsʻ» hrat., 286 ēj: **(in Armenian)**

Texier Ch. (1842), Description de l'Armenie la Pers et la Mesopotamie, Paris, t. II, hrat. Librairie Hachette Et Cie, 214. **(in Franch)**

Vardanyan S. (1959), Haykakan zh'oghovrdakan bnakeli tneri chartarapetutʻyun, Erewan, «Haypethrat», 132 ēj: **(in Armenian)**